

**А.М. АЙРАПЕТЯН**

**ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ И СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ  
СФЕРЫ ПРОМЫШЛЕННОСТИ РА**

Анализируется состояние сферы промышленности РА на основе показателей экономического роста, занятости и экспорта. Исследования проводились за последнее десятилетие по некоторым показателям на пятилетней основе.

**Ключевые слова:** промышленность, промышленная продукция, экспорт, отрасли экономики, показатель сложности экономики.

**A.M. HAYRAPETYAN**

**TRENDS OF DEVELOPMENT AND PECULIARITIES OF THE  
INDUSTRY SPHERE IN RA**

An analysis of the state of the RA industry sphere is carried out, based on economic growth, employment and export indicators. The research is carried out for the last decade, for some indicators, on a five-year basis.

**Keywords:** industry, industrial products, exports, economic sectors, indicator of economic complexity.

ՀՏԴ 658.14.011.1:336.025

**L.U. ՍԱՐԳՍՅԱՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱՎՋՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ՝ «ՍՎԵՏ-ՏԵՔՍ» ՍՊԸ  
ՕՐԻՆԱԿՈՎ  
(Գյումրի)**

Վերլուծվել է Գյումրիում գործող ռուսաստանյան «Սվետ-Տեքս» ՍՊԸ ձեռնարկության ներդրումային արդյունավետությունը: Այդ նպատակով հետազոտվել և ընդհանրացվել են ներդրումային արդյունավետության և գրավչության տեսական և մեթոդական որոշ մոտեցումներ, բացահայտվել են ձեռնարկության ֆինանսական գրավչության որոշման որոշ առանձնահատկություններ:

**Առանցքային բառեր.** ներդրումային արդյունավետություն, արտադրական գրավչություն, կադրային գրավչություն, ինովացիոն գրավչություն, ֆինանսական գրավչություն:

Ֆինանսական և տնտեսական ճգնաժամից տնտեսությունը դուրս բերելու պայմաններից է ներդրումների արդյունավետության ապահովումը, ինչը կազմակերպություններին հնարավորություն է տալիս արձագանքել արտաքին և ներքին փոփոխություններին:

Փորձել ենք հասկանալ, թե որքանով է գրավիչ «Սվետ-Տեքս» ՍՊԸ-ն ներդրողների համար: Ուսումնասիրությունները կատարվել են 2020-2022 թթ. տվյալներով:

Ներդրումային գրավչությունը որոշելու համար ներդրողը նախ և առաջ պետք է ուսումնասիրի հետևյալ հարցերը. ի՞նչ և ինչպիսի՞ արտադրանք է թողարկում ձեռնարկությունը, ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով է արտադրում, ու՞մ համար է արտադրում, ի՞նչ ստորաբաժանումներ ունի ձեռնարկությունը, քանի՞ և ինչպիսի՞ հոսքագծեր են գործում, ի՞նչ հաստիքներ գոյություն ունեն ձեռնարկությունում:

Վերը նշված հարցերը խիստ պայմանական են, և յուրաքանչյուր ներդրող կարող է մշակել իրեն հետաքրքրող հարցերը և դրանց պատասխանը ստանալուց հետո որոշի՝ արդյո՞ք ցանկանում է վերլուծել տվյալ ձեռնարկության գրավչությունը, թե՛ ոչ:

Ինչ վերաբերում է ՁԻԳ-ի բաղադրիչներին, մեր կարծիքով, առաջնահերթ նշանակություն ունեն հետևյալ 4 բաղադրիչները՝

1. արտադրանքի գրավչություն,
2. կադրային գրավչություն,
3. ինովացիոն գրավչություն,
4. ֆինանսական գրավչություն [1]:

Ձեռնարկության գրավչության ընթացիկ վիճակը հասկանալու համար կատարվել է արտադրական գրավչության հաշվարկ:

Հայաստանում գործող ռուսաստանյան «Սվետ-Տեքս» ՍՊԸ-ն արտադրում է այնքան, որքան և սպառվում է, ձեռնարկությունն աշխատում է պատվերներով և պատվերը ստանալուց հետո նոր սկսում է զբաղվել արտադրությամբ, առանց պատվերների ձեռնարկությունը արտադրանք չի թողարկում: Պատվերները տարեցտարի գնալով ավելանում են, այսինքն աճում է պահանջարկը:

$K_{\text{ԱԱԳ}} = 1$ , որովհետև արտադրվում է այնքան, որքան սպառվում է: Այսպիսով, սպառողի համար արտադրանքի գրավչությունը որոշելուց հետո կարելի է պնդել, որ այն ներդրողի համար ցանկալի ցուցանիշ է, և գրավիչ է ներդրում կատարելու համար:

Նշենք, որ «Սվետ-Տեքս» միշտ աշխատել է այս սկզբունքով, և ձեռնարկության արտադրանքի գրավչությունը ցանկալի ցուցանիշ է ունեցել:

Կադրային գրավչության որոշման համար ծանոթանանք 3 տարիների ընթացքում ընդունված, ազատված և գրանցված աշխատողների քանակին:

$$K_{\text{ԿԳ}} = \frac{(\text{ընդունվածների քանակ} - N_{\text{X}} \text{ ազատվածների քանակ}) - 1}{\text{ԱԱԱ միջին ցուցակային թիվ}}$$

2020 թվականի տվյալներով՝ ձեռնարկությունում գրանցված են եղել ավելի քան 90 աշխատող, նրանցից 80-ն ընդունվածների քանակն է, իսկ 15-ը՝ ազատվածների:

Այսպիսով, ըստ բանաձևի՝

$$K_{\text{ԿԳ}} = \frac{(80-15)-1}{90} = 0,7:$$

2021 թվականի տվյալներով՝ ձեռնարկությունում գրանցված են եղել ավելի քան 320 աշխատող, նրանցից 300-ն ընդունվածների քանակն է, իսկ 50-ը՝ ազատվածների:

Այսպիսով, ըստ բանաձևի՝

$$K_{\text{ԿԳ}} = \frac{(300-50)-1}{320} = 0,5:$$

Ըստ 2022 թվականի տվյալների՝ ձեռնարկությունում գրանցված են եղել ավելի քան 600 աշխատող, նրանցից 520-ն ընդունվածների քանակն է, իսկ 100-ը՝ ազատվածների:

Այսպիսով, ըստ բանաձևի՝

$$K_{\text{ԿԳ}} = \frac{(520-100)-1}{600} = 0,2:$$

Կադրային գրավչության նախընտրելի ցուցանիշ է այն ցուցանիշը, որը մեծ է 0-ից, և այս դեպքում կադրային գրավչությունը որոշելուց հետո պարզ է դառնում, որ հետզհետե կադրերի ներդրում իրականացնելու գրավչությունը կրճատվում է, քանի որ ձեռնարկությունն արդեն իսկ ունի որակյալ մասնագետներ, սակայն դեռ նախընտրելի ցուցանիշ է հանդիսանում ներդրողի համար:

Ինովացիոն գրավչությունը նույնպես ներդրողի համար համարվում է կարևոր ցուցանիշներից և որոշվում է հետևյալ հարաբերակցության միջոցով.

$$K_{\text{ԻԳ}} = \frac{\text{կուտակման ֆոնդ}}{\text{զուտ շահույթ}}:$$

2020 թ.-ի տվյալներով՝ ձեռնարկության կուտակման ֆոնդը կազմել է 23431 դրամ, իսկ զուտ շահույթը՝ 46862 դրամ:

Այսպիսով, ըստ բանաձևի՝

$$K_{\text{ԻԳ}} = \frac{23431}{46862} = 0,5:$$

2021 թ.-ի տվյալներով ձեռնարկության կուտակման ֆոնդը կազմել է 68301 դրամ, իսկ զուտ շահույթը՝ 113835 դրամ:

Այսպիսով, 2021 թ. ինովացիոն գրավչությունը հավասար է՝

$$K_{FQ} = \frac{68301}{113835} = 0,6:$$

Ըստ 2022 թվականի տվյալների՝ ձեռնարկության կուտակման ֆոնդը կազմել է 94960 դրամ, իսկ զուտ շահույթը՝ 302401 դրամ:

Այսպիսով, 2021 թ. ինովացիոն գրավչությունը հավասար է՝

$$K_{FQ} = \frac{94960}{302401} = 0,3:$$

Ինովացիոն գրավչության նախընտրելի ցուցանիշ է այն ցուցանիշը, որը փոքր է 0,5-ից, և այս դեպքում ինովացիոն գրավչությունը որոշելուց հետո պարզ է դառնում, որ ներդրողի համար ինովացիոն գրավչության ամենանախընտրելի ցուցանիշը եղել է 2022 թ.-ին:

Շահութաբերության գործակիցները կրում են համալիր բնույթ և տալիս են ձեռնարկության գործունեության և ընդունած որոշումների արդյունավետության գնահատականը: Յուրաքանչյուր ձեռնարկության գործունեության արդյունավետությունը և ֆինանսական վիճակը բնութագրվում է շահութաբերության հարաբերական ցուցանիշների համակարգի միջոցով, որի կազմի մեջ են մտնում առավել հաճախակի օգտագործվող շահութաբերության ցուցանիշները՝ արտադրանքի շահութաբերությունը (ROC), վաճառքի շահութաբերությունը (ROS), սեփական կապիտալի շահութաբերությունը (ROE), ակտիվների շահութաբերությունը (ROA) [1]:

Արտադրանքի շահութաբերությունը ( $\bar{C}_{ար. ROC}$ ) ձեռնարկության տնտեսական գործունեության կարևորագույն ցուցանիշներից է, որի միջոցով գնահատվում է գործունեության արդյունավետությունը՝

$$\bar{C}_{ար. ROC} = \frac{\text{Շահույթ (վնաս) վաճառքից}}{\text{Արտադրանքի ինքնարժեք}} * 100\% :$$

2020 թ.-ին արտադրանքի ինքնարժեքը կազմել է 1445177, շահույթը վաճառքից՝ 46862, 2020 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{ար. ROC} = \frac{46862}{1445177} * 100\% = 3,2\%:$$

2021 թ.-ին արտադրանքի ինքնարժեքը կազմել է 1681642, շահույթը վաճառքից՝ 113835, 2021 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{ար. ROC} = \frac{113835}{1681642} * 100\% = 6,7\% :$$

2022 թվականին արտադրանքի ինքնարժեքը կազմել է 3436375, շահույթը վաճառքից՝ 293163, 2022 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{ար.ROC} = \frac{293163}{3436375} * 100\% = 8,5\% :$$

Ինչպես նշեցինք, արտադրանքի շահութաբերության միջոցով գնահատվում է գործունեության արդյունավետությունը, և որքան մեծ է այդ ցուցանիշը, այնքան նախընտրելի է ներդրողի կողմից: Այս դեպքում ամենանախընտրելի ցուցանիշը ստացվել է 2022 թ.-ին:

Վաճառքի շահութաբերությունը ( $\bar{C}_{վաճ.ROS}$ ) ցույց է տալիս հիմնական գործունեության արդյունավետությունը կամ շահույթի մասնաբաժինը արտադրանքի (աշխատանքների) վաճառքի հասույթի մեջ՝

$$\bar{C}_{վաճ.ROS} = \frac{\text{Շահույթ (վնաս) վաճառքից}}{\text{Հասույթ վաճառքից}} * 100\% :$$

2020 թ.-ին հասույթը վաճառքից կազմել է 1794261, շահույթը վաճառքից՝ 46862, 2020 թվականին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{վաճ.ROS} = \frac{46862}{1794261} * 100\% = 2,6\% :$$

2021 թ.-ին հասույթը վաճառքից կազմել է 2216640, շահույթը վաճառքից՝ 113835, 2021 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{վաճ.ROS} = \frac{113835}{2216640} * 100\% = 5,13\% :$$

2022 թվականին հասույթը վաճառքից կազմել է 4229538, շահույթը վաճառքից՝ 293163, 2022 թվականին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{վաճ.ROS} = \frac{293163}{4229538} * 100\% = 6,9\% :$$

Իհարկե, յուրաքանչյուր ներդրողի համար կարևոր է, որ վաճառքի շահութաբերությունը բարձր լինի, քանի որ այն ցույց է տալիս շահույթի մասնաբաժինը հասույթի մեջ, և, ինչպես գիտենք, յուրաքանչյուր ներդրողի նպատակն է ունեցվածքի օգտագործումից վաստակել առավելագույն եկամուտ կամ շահույթ: Այսպիսով, համեմատելով 3 տարիների տվյալները՝ վստահ կարող ենք ասել, որ ներդրողի համար ավելի շահութաբեր է եղել 2022 թվականը:

Սեփական կապիտալի շահութաբերությունը ( $\bar{C}_{սկ. ROE}$ ) բնութագրում է միայն ձեռնարկությանը պատկանող կապիտալի օգտագործման արդյունավետությունը [2].

$$\bar{C}_{սկ} ROE = \frac{\text{Չուտ շահույթ}}{\text{Կապիտալ և պահուստներ}} * 100\%:$$

2020 թ.-ին զուտ շահույթը կազմել է 46862, կապիտալը և պահուստները՝ 756500, 2020 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{սկ} ROE = \frac{46862}{756500} * 100\% = 6,19\%:$$

2021 թվականին զուտ շահույթը կազմել է 113835, կապիտալը և պահուստները՝ 651092, 2021 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{սկ} ROE = \frac{113835}{651092} * 100\% = 17,5\%:$$

2022 թ.-ին զուտ շահույթը կազմել է 302401, կապիտալը և պահուստները՝ 1655600, 2022 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{սկ} ROE = \frac{302401}{1655600} * 100\% = 18,2\%:$$

Այս գործակիցը թույլ է տալիս տարբեր ընկերություններում համեմատել ներդրումից եկամուտ ստանալու հեռանկարը: Սեփական կապիտալի շահութաբերությունը ցույց է տալիս, թե քանի միավոր զուտ շահույթ է ապահովել ներդրված յուրաքանչյուր միավոր գումար:

Ներդրողի համար ավելի նպատակահարմար կլինի ներդրում կատարել այն տարում կամ այն ձեռնարկությունում, որտեղ ներդրված յուրաքանչյուր միավոր գումարի դիմաց ավելի մեծ տոկոսով շահույթ կստանա: Մեր տվյալներով «Սվետ-Տեքս» ձեռնարկությունը 2022 թ.-ին ավելի շատ շահույթ է ապահովել ներդրողի համար, քան մնացած 2 տարիներին:

Ակտիվների շահութաբերությունը ( $\bar{C}_{ակ} ROA$ ) բնութագրում է ձեռնարկության ընդհանուր ակտիվների օգտագործման արդունավետությունը՝

$$\bar{C}_{ակ} ROA = \frac{\text{Շահույթ (վնաս) մինչև հարկումը}}{\text{Ակտիվներ}} * 100\%:$$

2020 թ.-ին ակտիվները կազմել են 500000, շահույթը մինչև հարկումը՝ 66407, 2020 թվականին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{ակ} ROA = \frac{66407}{500000} * 100\% = 13,28\%:$$

2021 թ.-ին ակտիվները կազմել են 784000, շահույթը մինչև հարկումը՝ 162387, 2021 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\bar{C}_{ակ} ROA = \frac{162387}{784000} * 100\% = 20,71\%:$$

2022 թ.-ին ակտիվները կազմել են 1256500, շահույթը մինչ հարկումը՝ 360860, 2022 թ.-ին արտադրանքի շահութաբերությունը կազմել է՝

$$\mathcal{C}_{ակ.}ROA = \frac{360860}{1256500} * 100\% = 28,7\%:$$

Ակտիվների շահութաբերությունը որքան բարձր լինի, այնքան ներդրողի համար ցանկալի արդյունք կլինի, քանի որ այս ցուցանիշը ցույց է տալիս, թե քանի միավոր գումար է անհրաժեշտ ընկերությանը մեկ միավոր գումարի շահույթ ստանալու համար: «Սվետ-Տեքս» ձեռնարկության ակտիվների օգտագործման արդյունավետության ցուցանիշը բարձր է եղել 2022 թ.-ին:

Կատարված հաշվարկների արդյունքները վկայում են «Սվետ-Տեքս» ՍՊԸ ներդրումային գրավչության և այդ ընկերությունում ներդրումներ կատարելու նպատկահարմարության մասին: Ներկայումս մշակվել են ձեռնարկությունների ներդրումային գրավչության գնահատման բազմաթիվ ցուցանիշներ, որոնք կախված են բազմաթիվ գործոններից, մասնավորապես՝ երկրում տիրող տնտեսական ու քաղաքական իրավիճակից, միջազգային ասպարեզում տեղի ունեցող իրադարձություններից, ինչպես նաև առկա իրավիճակից, ընկերության անձնակազմի որակավորման մակարդակից տնտեսության համապատասխան ոլորտում, ընկերության ֆինանսական գործունեության բազմաթիվ այլ ցուցանիշներից, որոնց միջոցով կարելի է վերլուծել ներդրումային գրավչության բաղադրիչները:

Կարելի է եզրակացնել նաև, որ ընկերության ֆինանսական գրավչությունը ներդրումային գրավչության առանցքային օղակն է: Ցանկացած ներդրողի համար այն ֆինանսատնտեսական գործունեությունից ֆինանսատնտեսական կայուն արդյունքի ստացումն է: Եթե այդ արդյունքը կայուն չէ, ապա ներդրումների կատարման ընթացքում անխուսափելիորեն առաջանում են ֆինանսական ռիսկեր:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Մելքումյան Մ.** Բիզնես Էկոնոմիկա: Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար.- Երևան, 2002. - 616 էջ:
2. **Հարությունյան Թ.Հ.** Ներդրումներ և ներդրումային գործունեություն. Ուս. ձեռնարկ. - Եր., ՀԱԱՀ, 2021. - 22 էջ:

**Л.С. САРГСЯН**

**АНАЛИЗ ФИНАНСОВОЙ ПРИВЛЕКАТЕЛЬНОСТИ НА ПРИМЕРЕ  
ООО «СВЕТ-ТЕКС»**

Проведен анализ инвестиционной эффективности действующего в Гюмри российского предприятия ООО «Свет-Текс». С этой целью исследованы и обобщены некоторые теоретические и методические подходы к определению инвестиционной эффективности и привлекательности. Выявлены некоторые особенности определения финансовой привлекательности предприятия.

**Ключевые слова:** инвестиционная эффективность, производственная привлекательность, кадровая привлекательность, инновационная привлекательность, финансовая привлекательность.

**L.S. SARGSYAN**

**ANALYSIS OF FINANCIAL ATTRACTIVENESS ON THE EXAMPLE OF  
“SVET-TEX” LLC**

The paper analyzes the investment efficiency of the Russian enterprise «Svet-Tex» LLC operating in Gyumri. For that purpose, some theoretical and methodological approaches to determining the investment efficiency and attractiveness have been investigated and generalized; some features of determining the financial attractiveness of an enterprise are revealed.

**Keywords:** investment efficiency, production attractiveness, personnel attractiveness, innovative attractiveness, financial attractiveness.